



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

PEDAGOGY AND SOCIAL SCIENCES

2(55)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

**ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ԻՆՏԵՐՖԵՐԵՆՑԻԱՆ ԵՎ ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅՈՒՄ**

ՀԱՍՄԻԿ ԲԻՇԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ բառապաշարային ինտերֆերենցիա, բառապաշարային ինտերֆերենցիայի տեսակներ, միջլեզվական բառապաշարային ինտերֆերենցիա, ներլեզվական բառապաշարային ինտերֆերենցիա

Հոդվածի նպատակն է բառապաշարային ինտերֆերենցիայի և դրա տեսակների ուսումնասիրությունը: Ներկայացվում են հայ, ռուս և արևմտյան մանկավարժ-մեթոդիստների կողմից տրված տվյալ հասկացության սահմանումները: Հեղինակը համակարծիք է այն մասնագետների հետ (Ս. Ասատրյան, Ս. Յենգեր), ովքեր բառապաշարային ինտերֆերենցիան դիտարկում են որպես մեկ լեզվի բառապաշարի միայն բացասական փոխներթափանցում մեկ այլ լեզու: Հոդվածագիրը քննում է բառապաշարային ինտերֆերենցիայի տեսակները՝ ըստ լեզվական միավորների բնորոշ առանձնահատկությունների, խոսքի մասերի պատկանելիության, ինչպես նաև առաջացման բնույթի և ուղղության: Յուրաքանչյուր տեսակ ուղեկցվում է համապատասխան օրինակներով: Հեղինակը ներկայացնում է բառապաշարային ինտերֆերենցիայի դասակարգման սեփական համակարգված տարբերակը՝ ընդգծելով դրա առավելությունները և օգտագործման նպատակահարմարությունը: Նշվում է, որ տվյալ դասակարգումը թույլ է տալիս մշակել մեթոդներ, որոնք հնարավոր է կիրառել ցանկացած լեզվում կատարվող բառապաշարային ինտերֆերենցիայի սխալներն ուղղելիս:

Լեզվական ինտերֆերենցիայի ամենաշատ ուսումնասիրված տեսակներից մեկը բառապաշարային ինտերֆերենցիան է: Այն լայնորեն ուսումնասիրվել է ինչպես ռուս, այնպես էլ արևմտյան լեզվաբան-մեթոդիստների գիտական հոդվածներում և մենագրություններում (Алимов 2005: 153, Шимановская 2014: 390, Ценгер 2014: 20, Dweik & Othman 2017: 67, Kushnaryova 2016: 187):

Հետագոտելով հայ մեթոդական գրականությունը՝ նկատում ենք, որ հայկական համատեքստում *բառապաշարային ինտերֆերենցիա* երևույթը շատ քիչ է ուսումնասիրված: Դա պայմանավորված է թերևս նրանով, որ հայալեզու մեթոդական գրականության մեջ ինքնին ինտերֆերենցիային վերաբերող ուսումնասիրությունների քանակը սակավաթիվ է:

Բառապաշարային ինտերֆերենցիա հասկացության սահմանման խնդրի վերաբերյալ մանկավարժ-մեթոդիստները տարակարծիք դիրքորոշումներ են արտահայտում: Առաջին խմբի ներկայացուցիչների պնդմամբ՝ այն մեկ լեզվի բառապաշարի ներթափանցումն է մեկ այլ լեզու (Алимов 2005: 153, Шимановская 2014: 390): *Ներթափանցում* եզրույթի նման օգտագործումը հանգեցնում է մի շարք թյուրըմբռնումների, քանի որ չհստակեցնելու պարագայում այն կարող է վերաբերել ոչ միայն *բացասական փոխներթափանցմանը*, որի արդյունքում սովորողները կատարում են սխալներ, այլև *դրական փոխներթափանցմանը*, ինչը խթանում է օտար լեզվի ուսուցմանը:

Երկրորդ խմբի ներկայացուցիչների պնդմամբ՝ բառապաշարային ինտերֆերենցիան մեկ լեզվի բառապաշարի զուտ բացասական փոխներթափանցումն է մյուս լեզու (Ասատրյան 2010: 39, Ценгер 2014: 20): Ներկայացնելով սույն երևույթի սահմանման շուրջ ծագած տարակարծությունը, կարծում ենք, որ երկրորդ տարբերակը ավելի մոտ է *բառապաշարային ինտերֆերենցիա* եզրույթի մեր պատկերացմանը: Վերոնշյալ պնդման համար հիմք է հանդիսանում այն, որ առաջին սահմանման մեջ «ներթափանցում» հասկացությունը ենթադրում է ինչպես բացասական փոխներթափանցումը (*ինտերֆերենցիան*), այնպես էլ դրական փոխադրումը (*տրանսպոզիցիա/տրանսֆերենցիա/փոխառությունը*), մինչդեռ մեզ համար ընդունելի տարբերակում «բառապաշարային ինտերֆերենցիա» եզրը կարող է օգտագործվել միայն բնութագրելու մեկ լեզվի բառապաշարի բացասական փոխներթափանցումը մյուս լեզու:

Բառապաշարային ինտերֆերենցիան ամենից հաճախ տեղի է ունենում, երբ սովորողներն առանց նկատելու փոխադրում են մայրենի լեզվում օգտագործվող լեզվական միավորի ձևաբանական, ոճաբանական, իմաստաբանական և շարահյուսական առանձնահատկությունները դրա «համարժեք» օտար լեզվի տարբերակներից միայն մեկին: Բանն այն է, որ նման դեպքերում լեզվական միավորի ոչ բոլոր առանձնահատկություններն են փոխանցվում, թերևս առաջին հայացքից ընդունելի թվացող, օտար լեզվում դրան հավասարազոր կամ առավելագույնս ճշգրիտ տարբերակներից միայն մեկին: Արդյունքում, սովորողները կատարում են

մի շարք բառապաշարային սխալներ, որոնցից խուսափելու լավագույն տարբերակը, ըստ լեզվաբան Ս. Վյաշենկոյի, լեզվական միավորների առանձնահատկությունները միմյանցից տարանջատելն ու առանձին ուսումնասիրելն է: Հեղինակն առանձնացնում է ցանկացած լեզվական միավորին բնորոշ հետևյալ ութ առանձնահատկությունները՝

1. հնչյունաբանական կառուցվածքը,
2. ձևաբանական կառուցվածքը,
3. շարահյուսական առանձնահատկությունները,
4. բառի առաջնային իմաստը,
5. բառի լրացուցիչ իմաստը,
6. սոցիալ-մշակութային առանձնահատկությունները,
7. արժույթայնությունը,
8. իմաստաբանական կառուցվածքը (Вященко 1979: 50):

Վերոնշյալ բաղադրիչների հիման վրա Վ. Վյաշենկոն առանձնացնում է բառապաշարային ինտերֆերենցիայի հետևյալ տիպերը՝

1. Հնչյունաբանական կառուցվածքի նմանության արդյունքում լեզվական միավորների իմաստի համընկնման թյուր պատկերացում: Մեթոդական գրականության մեջ այդ բառերը կոչվում են «թարգմանչի կեղծ բարեկամներ»: Վերոնշյալ տերմինը օգտագործվում է սկսած 1928թ-ից, ֆրանսիացի լեզվաբաններ Մ. Քեսլերի և Ժ. Դերոկինյի «Թարգմանչի կեղծ բարեկամներ կամ անգլերեն բառապաշարի կեղծ նմանակներ» գրքի հրատարակումից հետո, որում համեմատականներ են տարվում անգլերենի և ֆրանսերենի կեղծ բարեկամների (միջլեզվային հոմանիշներ, նույնանուններ և հարանուններ) միջև (Koessler et Deroquigny 1928: XI): Դիտարկենք դրա մի քանի օրինակներ:

Անգլերեն	Հայերեն	Ռուսերեն
1. Dutch	Հոլանդական, ոչ թե Դանիական:	Голландский, ոչ թե датский.
2. Physician	Բժիշկ, թերապևտ, ոչ թե ֆիզիկոս:	Врач, ոչ թե физик.
3. Magazine	Ամսագիր, ոչ թե խանութ:	Журнал, ոչ թե магазин.

2. Իմաստային միևնույն խմբին պատկանող լեզվական միավորների ձևաբանական կառուցվածքի համընկնման թյուր պատկերացում: Օրինակ՝

Անգլերեն	Ռուսերեն	Հայերեն

1. <i>Composer</i> , ոչ թե <i>compositor</i> .	Композитор	Կոմպոզիտոր
2. <i>Architect</i> , ոչ թե <i>architector</i> .	Архитектор	Ճարտարապետ

3. Հնչյունաբանական կառուցվածքի նմանության արդյունքում իմաստային միևնույն խմբին պատկանող լեզվական միավորների լրացուցիչ իմաստների համընկնման թյուր պատկերացում:

Անգլերեն	Ռուսերեն	Հայերեն
Ambition 1. <u>strong desire</u> 2. <u>aspiration</u> Բացատրություններից երկուսում ունի դրական իմաստ:	1. <u>честолюбие</u> 2. <u>стремление</u> Բացատրություններից առաջինում բացասական լրացուցիչ իմաստ ունի, իսկ երկրորդում դրական:	1. փառասիրություն 2. ձգտում, տենչ Բացատրություններից առաջինում բացասական լրացուցիչ իմաստ ունի, իսկ երկրորդում դրական:

4. Մայրենի և օտար լեզուների լեզվական միավորների իմաստային արժույթայնության (валентность) անհամապատասխանություն, որը լեզվաբանության մեջ բնութագրվում է որպես նախադասության անդամներից մեկի համադրելիություն տվյալ նախադասության այլ անդամների հետ: Հետևաբար, «look» բայի արժույթայնությունը գնահատվում է դրա համադրելիությամբ նախադասության մակբայի, ուղիղ խնդրի և այլ անդամների հետ: Օրինակ՝

Հայերեն	Անգլերեն տարբերակ	ճիշտ	Հայերենի ինտերֆերենցիայի արդյունք
Աշխարհը կլոր է	It's a small world		It's a round world
Դափարկ հայացք	Blank look		Empty look
Թարմ լուրեր	Latest news		Fresh news

5. Հաղորդակցական գործընթացում սոցիալ-մշակութային գործոններով պայմանավորված բառիմաստի կոնկրետացում:
 Բառապաշարային ինտերֆերենցիայի տվյալ տեսակի լավագույն օրինակները, թերևս, անգլերեն «շնորհակալություն հայտնելը» և «ինչպե՞ս ես» հարցին հարցով պատասխանելն են: Օրինակ՝

Լեզու	Բառակապակցություն	Ճիշտ պատասխան	Հայերենի ինտերֆերենցիայի արդյունք
Անգլերեն	Teacher: Thank you for your assistance.	Student: Don't mention it/ You are welcome.	Student: Please.
Հայերեն	Ուսուցիչ. Շնորհակալություն օգնության համար:	Աշակերտ. «Խնդրեմ»:	Աշակերտ. «Խնդրեմ»:

6. Մայրենի և օտար լեզուների լեզվական միավորների իմաստաբանական ծավալների համընկնման թյուր պատկերացում: Բառապաշարային ինտերֆերենցիայի տվյալ տարբերակը կարող է լինել երեք տեսակի՝

➤ Հայերեն բառի իմաստային ծավալը ավելի մեծ է քան համարժեք անգլերեն տարբերակինը:

Հայերեն տարբերակը	Անգլերեն տարբերակները
Գեղեցիկ	1. beautiful, 2. pretty, 3. nice, 4. handsome
Ափ	1. bank, 2. shore, 3. coast
Բաժանել	1. divide, 2. distribute, 3. separate, 4. part

➤ Հայերեն բառի իմաստային ծավալը ավելի փոքր է քան համարժեք անգլերեն տարբերակինը:

Անգլերեն տարբերակը	Հայերեն տարբերակները
Break	1. ճեղք, 2. կտրվածք, 3. ընդմիջում
Ring	1. մատանի, 2. զանգ/դողանջ, 3. ռինգ
Court	1. դատարան, 2. կորտ, 3. արքունիք

➤ Հայերեն բառի իմաստային ծավալը մասնակի է համընկնում համարժեք անգլերեն տարբերակի հետ (Вященко 1979: 51-54):

Հաշվի առնելով բառապաշարային ինտերֆերենցիայի դասակարգման նրբությունները, Վ. Վյաշենկոն նշում է, որ բառապաշարային ինտերֆերենցիայի քննությունը կարելի է համարել լիարժեք և համալիր միայն այն դեպքում, երբ համեմատվում են ոչ միայն միևնույն իմաստն արտահայտող առանձին բառերը, այլև նույն իմաստն արտահայտող մի խումբ բառերը կամ առնվազն մեկ բառը մյուս լեզվում դրան համապատասխանող մի խումբ բառերի հետ: Հեղինակի պնդմամբ՝ նման վերլուծություն չիրականացնելու պարագայում, անհնար է դառնում խուսափել լեզվական ինտերֆերենցիայի արդյունքում կատարվող սխալներից, քանի որ սովորողն իր մայրենի լեզվի բազմիմաստ բառի ողջ

իմաստային ծավալը հաղորդում է օտար լեզվում յուրացված դրա միայն մեկ տարբերակին (Вященко 1979: 26):

Ի տարբերություն Վ. Վյաշենկոյի դասակարգման, Ս. Յենգերը ներկայացնում է սույն երկուսի դասակարգման այլ տարբերակ՝ ըստ առաջացման բնույթի և ուղղության: Հեղինակը՝ իր «Ձևաբանական ինտերֆերենցիան՝ որպես ռուսերենի և ֆրանսերենի հաղորդակցման արդյունք» (Ценгер 2014: 40-41) աշխատության մեջ առանձնացնում է ներլեզվական, միջլեզվական բառապաշարային ինտերֆերենցիաները և բակառությունը:

1. *Ներլեզվական ինտերֆերենցիա* (հարանուններ) – սխալներ են, որոնք սովորողները կատարում են մեկ լեզվի ներսում ձևով և հնչողությամբ նման, սակայն տարբեր իմաստներ ունեցող բառերի ոչ տեղին օգտագործման արդյունքում: Օրինակ՝

- estimate – estimation - esteem
- effective – efficient
- sensitive – sensible

2. *Միջլեզվական ինտերֆերենցիա* - սխալներ են, որոնք կատարվում են լեզվից լեզու: Այս տեսակ սխալները կատարվում են երկու դեպքում: Առաջինը՝ բառերի իմաստաբանական առանձնահատկությունների նմանության արդյունքում: Նմանատիպ սխալների օրինակներ հանդիպում ենք Վ. Վյաշենկոյի կողմից կատարված բառապաշարային ինտերֆերենցիայի դասակարգման տարբերակներում:

Երկրորդը՝ ինտերֆերենցիան տեղի է ունենում բառերի կառուցվածքային նմանության խախտման արդյունքում: Վերոնշյալը ենթադրում է, որ մայրենի լեզվի համանման բառերի ազդեցության հետևանքով օտար լեզվում դրանց համապատասխան տարբերակները սխալ են կազմվում: Հեղինակի պնդմամբ, այս խմբում ներգրավված սխալները երկրորդական ձևույթների՝ մասնավորապես մայրենի և օտար լեզուներում նախածանցների և վերջածանցների, օգտագործման նմանությունների արդյունքում թույլ տրված սխալներն են: Օրինակ՝

Un-, ir-, non- im-, in-, a-, dis-, mis-, ab- ժխտական իմաստ արտահայտող նախածանցների օգտագործման արդյունքում կատարված սխալները:

<i>Անգլերեն ճիշտ տարբերակը</i>	<i>Անգլերեն սխալ տարբերակը</i>	<i>Հայերեն տարբերակը</i>
Amoral	Inmoral, immoral, unmoral	Անբարոյական
Abnormal	Unnormal, innormal	Աննորմալ
Impolite	Inpolite, unpolite	Անքաղաքավարի

Ultra-, super-, hyper-, over- բառարմատի իմաստը ընդարձակող նախածանցների օգտագործման արդյունքում կատարված սխալները:

Անգլերեն ճիշտ տարբերակը	Անգլերեն սխալ տարբերակը	Հայերեն տարբերակը
Overestimate	Superestimate	Գերագնահատել
Ultramodern	Supermodern	Գերնորաձև
Hyperactive	Superactive	Գերակտիվ

Pre-, fore- ժամանակի իմաստ արտահայտող նախածանցների օգտագործման արդյունքում կատարված սխալները:

Անգլերեն ճիշտ տարբերակը	Անգլերեն սխալ տարբերակը	Հայերեն տարբերակը
Foretell	Pretell	Նախագուշակել
Forefather	Prefather	Նախահայր
Predestine	Foredestine	Նախասահմանել

Հեղինակի պնդմամբ, միջլեզվական բառապաշարային ինտերֆերենցիայի երկու տարբերակները միմյանցից տարանջատել անհրաժեշտ է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովորողները իրական հաղորդակցական գործընթացում պարբերաբար կատարում են մեծ քանակությամբ թե՛ առաջին, թե՛ երկրորդ տեսակին պատկանող սխալներ:

3. *Բակառություն* (паронимическая аттракция) – սխալներ են, որոնք առաջանում են, երբ նախադասության անդամների շարահասությունը հատուկ խախտվում է առանձին բառեր կամ բառակապակցություններ ընդգծելու նպատակով: Դրանք միտումնավոր կերպով կատարված սխալներ են, որոնք հիմնականում օգտագործվում են գեղարվեստական գրականության մեջ առանձնահատուկ արտահատչականություն առաջացնելու նպատակով (Լենգեր 2014: 40):

Ինչպես տեսնում ենք, տվյալ դասակարգման տարբերակում առաջին երկու տեսակները կրում են բացառապես բացասական բնույթ, մինչդեռ երրորդ տարբերակը ավելի դրական բնույթ է կրում, ավելին՝ այն սխալ չի դիտվում, քանի որ օգտագործվում է գեղարվեստական գրականության մեջ ոճաբանական նրբերանգ հաղորդելու նպատակով:

Ս. Յենգերը նշում է նաև, որ բառապաշարային ինտերֆերենցիան ըստ իրականացման ուղղության կարող է լինել՝ *էքստրավերսիա* և *ինտրավերսիա*: *էքստրավերսիան* հեղինակը բնութագրում է որպես լեզվական միավորների փոխներթափանցում մայրենիից օտար լեզու: *Ինտրավերսիան*՝ որպես լեզվական միավորների փոխներթափանցում օտար լեզվից մայրենի լեզու (Լենգեր 2014: 40):

Բառապաշարային ինտերֆերենցիայի դասակարգման մեկ այլ տարբերակ է առաջարկում լեզվաբան Ս. Կուշնյարովան: Նրա պնդմամբ՝ տվյալ երևույթի դրսևորումները քննելու տարբերակ կարող է հանդիսանալ նաև դրանք ըստ խոսքի մասերի պատկանելիության ուսումնասիրելը: Արդյունքում, հեղինակն առանձնացնում է՝ *գոյական անդամի, բայական անդամի, ածականի և մակբայի* բառապաշարային ինտերֆերենցիայի տեսակները (Kushnaryova 2016: 188):

Ծանոթանալով մի շարք այլ ուսումնասիրությունների վերաբերող բառապաշարային ինտերֆերենցիային և դրա հնարավոր տեսակներին, կարծում ենք, որ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում ուսումնասիրություն կատարելիս, թերևս, ամենանպատակային տարբերակը այն ըստ առաջացման բնույթի տարանջատելն է: Նման դասակարգումը թույլ է տալիս տարբերակել ներլեզվական և միջլեզվական բառապաշարային ինտերֆերենցիայի տեսակները: Միևնույն ժամանակ առավել արդյունավետ է թվում միջլեզվական բառապաշարային ինտերֆերենցիայի մեջ ընդգրկել բառերի իմաստաբանական առանձնահատկությունների և ծավալի, դրանց կառուցվածքային և հնչյունաբանական նմանության խախտման, իմաստային արժույթայնության սխալ համընկնման արդյունքում թույլ տրված սխալները (նշված տեսակի սխալների օրինակներ ներկայացված են Վ. Վյաշենկոյի և Ս. Յենգերի բառապաշարային ինտերֆերենցիայի վերը քննարկված տարբերակներում):

Ներլեզվական բառապաշարային ինտերֆերենցիայի մեջ առաջարկում ենք հարանուններից բացի ներառել նաև հոմանիշ, հականիշ և համանուն (homonym) բառերի օգտագործման ընթացքում արված սխալները:

1. Հոմանիշ բառերի խմբեր՝
 - show - display - exhibit - present - point to - indicate - demonstrate
 - wrong - incorrect - inaccurate - mistaken - improper - erroneous
 - fair - just - impartial - unbiased - objective - unprejudiced - honest
2. Հականիշ բառերի խմբեր՝
 - arrive - leave - depart - go
 - tough - soft - fragile - easy
 - expand - contract - condense - shrink
3. Համանուն կամ նույնանուն բառերի խմբեր՝
 - for - four - fore
 - pair - pear - pare
 - there - their - they're

Տվյալ դասակարգման առավելությունը մեր համոզմամբ կայանում է նրանում, որ այն թույլ է տալիս առաջինը՝ հասկանալ և ուսումնասիրել բառապաշարային ինտերֆերենցիայի առաջացման աղբյուրները: Երկրորդը՝ դրա միջոցով տեսանելի է դառնում ներլեզվական և միջլեզվական բառապաշարային ինտերֆերենցիայի արդյունքում կատարվող սխալների հարաբերակցությունը: Երրորդը՝ առանձնացնել բառապաշարային ինտերֆերենցիայի ուղղմանը նպաստող առավել արդյունավետ մեթոդները: Չորրորդը՝ նման համակարգված դասակարգման արդյունքում ավելի դյուրին է դառնում մշակել այնպիսի մեթոդները, որոնք կարող են կիրառվել բառապաշարային ինտերֆերենցիայի սխալներն ուղղելիս՝ անկախ սովորողների մայրենի լեզվից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Ս. Պ., Փոխառություններն ու միջլեզվական փոխներթափանցումը ժամանակակից անգլերենի բառապաշարի ուսուցման գործընթացում, Մանկավարժական միտք, 3-4, «Զանգակ» հրատարակչություն, Եր., 2010, էջ 35-42:
2. Алимов В. В., Интерференция в переводе. (На материале профессионально ориентированной межкультурной коммуникации и перевода в сфере профессиональной коммуникации), дисс. доктора филологических наук, Москва, 2005, 260 стр.
3. Вященко В. С., Предупреждение и преодоление лексической интерференции в английской речи студентов II курса, дисс. кандидата педагогических наук, Ленинград, 1979, 170 стр.
4. Ценгер С. С., Морфологическая интерференция при контакте французского и русского языков, дисс. кандидата филологических наук, Москва, 2014, 233 стр.
5. Шимановская Л. А., Языковая интерференция и ее проявление в русско-английском переводе научной статьи по химической технологии, Вестник Казанского технологического университета, 17(9), 2014, с. 388-393.
6. Dweik B. S., & Othman Z. A., Lexical and grammatical interference in the translation of written texts from Arabic into English, Academic Research International, 8(3), 2017, p. 65-70.
7. Koessler M., et Deroquigny J., Les faus amis ou les trahisons du vocabulaire anglais, Conseil aux traducteurs, Paris, 1928, pp. 387.

REFERENCES

1. Asatryan S. P., Poxarowtyownnern ow mijlezwakan poxnertapancowmy jhamanakacic anglereni barapashari owsowcman gorcyntacowm, Mankavarjhakan mitq, 3-4, «Zangak» hratarakchowtyown, Er&an, 2010, ej 35-42.
2. Alimov V. V., Interferencija v perevode. (Na materiale professionalno orientirovannoj mezhhkulturnoj kommunikacii i perevoda v sfere professionalnoj kommunikacii). Dissertacija na soiskanie uchenoj stepeni doktora filologicheskix nauk, Moskva, 2005, 260 str.
3. Vjashhenko V. S., Preduprezhdenie i preodolenie leksicheskoy interferencii v anglijskoj rechi studentov II kursa, Dissertacija na soiskanie uchenoj stepen ikandidata pedagogicheskix nauk, Leningrad, 1979, 170 str.
4. Cenger S. S., Morfologicheskaja interferencija pri kontakte francuzskogo i russkogo jazykov. Dissertacija na soiskanie uchenoj stepeni kandidata filologicheskix nauk, Moskva, 2014, 233 str.
5. Shimanovskaja L. A., Jazykovaja interferencija i ee projavlenie v russko-anglijskom perevode nauchnoj stat'i po himicheskoy tehnologii, Vestnik Kazanskogo tehnologicheskogo universiteta, 17(9), 2014, s. 388-393.

АСМИК БИШАРЯН - ЛЕКСИЧЕСКАЯ ИНТЕРФЕРЕНЦИЯ И ЕЕ ВИДЫ В МЕТОДИКЕ ПРЕПОДАВАНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Ключевые слова: лексическая интерференция, разновидности лексической интерференции, межъязыковая лексическая интерференция, внутриязыковая лексическая интерференция

Целью данной статьи является изучение лексической интерференции и ее видов. Приведены определения этого понятия, которые даны армянскими, российскими и западными учеными. Автор солидарен с мнением исследователей (С. Асатрян, С. Ценгер и др.), определяющих лексическую интерференцию как негативное влияние особенностей родного языка на изучаемый иностранный. В статье рассматриваются виды лексической интерференции, анализируются их характерные признаки, приводятся соответствующие примеры. Автор представляет собственную систематизированную версию классификации лексической интерференции, подчеркивая ее преимущество и целесообразность применения. Отмечается, что данная классификация позволяет разрабатывать методы, которые могут быть использованы для

исправления ошибок, вызванных лексической интерференцией, в процессе изучения любого иностранного языка.

HASMIK BISHARYAN - LEXICAL INTERFERENCE AND ITS CLASSIFICATIONS IN ENGLISH TEACHING METHODOLOGY

Keywords: *lexical interference, types of lexical interference, interlingual lexical interference, intralingual lexical interference*

The purpose of the article is the study of lexical interference and its classifications. The definitions of the term proposed by Armenian, Russian and Western scholars are presented. The author is concordant with the researchers (S. Asatryan, S. Tsenger et al.) who define lexical interference as a negative transfer of the native language in the target language. The types of lexical interference are discussed according to the characteristic features of language units, parts of speech they belong to, as well as the nature and the direction of their origin. Each type is followed by relevant examples. The author presents her own systematized version of classifying lexical interference, emphasizing its advantages and appropriateness of use. It is mentioned that the particular classification contributes to the development of the methods used to correct lexical interference errors made in any language.

Ներկայացվել է՝ 19.03.2021

Գրախոսվել է՝ 22.03.2021

Երաշխավորվել է ԲՊՀ Մանկավարժության և լեզուների դասական դան մեթոդիկայի ամբիոնի կողմից՝ 23.04.2021